ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
13	Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Գլխարկ (տոնական)՝ գլխարկանշանով (Ձև 1): Պատրաստվում է կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%) և ունի մուգ կապույտ թավշյա գլխարկաբոլորք, իսկ գլխարկագագաթի և գլխարկաբոլորքի եզրով անցնում է մուգ կարմիր գույնի՝ 2,5 մմ լայնությամբ, եզրաշերտ: Գլխարկաբոլորքի վրա երկու ոսկեգույն կոճակներով ամրացվում է ոսկեգույն ցանցահյուսազարդով երկշերտ հյուսված կապը (քուղը), իսկ առջևի կենտրոնական մասում՝ գլխարկանշանը (նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան (Ձև 5), որը նախապես (մինչև մատակարարումը) համաձայնեցվում է Գնորդի հետ): Գլխարկանշանը (կոկարդը) ամրացվում է գլխարկի կենտրոնում և պատրաստվում է ոսկեգույն ձուլածո մետաղից՝ Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանման՝ դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանի պատկերով: Գլխարկահովհարը երկարացված է, սև գույնի և լաքապատ: Գլխարկի աստառը բնական մետաքսից է, ներսի ժապավենը բնական կաշվից՝ 30 մմ լայնությամբ: Գլխարկները ներսամասից պետք է ունենան պիտակ, որի վրա պետք է նշված լինի դրանց չափը: Նախքան գլխարկների պատրաստումը գլխարկների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Գլխարկների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև գլխարկների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված

	կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
13	